ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ- ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կատարող- Էլյա Սերոբյան

Դպրոց- Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց

Առարկա- Շախմատ

Կազմակերպություն- Հայաստանի շախմատի ակադեմիա

Կազմակերպիչներ-Սերոբ Խաչատրյան

Շուշաննա Սարգսյան

Թամարա Սարգսյան

Վահան Սարգսյան

Տաթև Ենոքյան

Նաիրա Մովսիսյան

Գյումրի 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Արժանապատվությունը հիմնարար հասկացություն է, բարձրագույն և առանցքային արժեք, որը հատուկ է յուրաքանչյուր մարդու ծնված օրվանից, հետևաբար առարկայի դասավանդման ընթացքում աշակերտների մեջ սերմանելը չափազանց կարևոր է: Արժանապատվությունն է աշակերտների մեջ ծնում պատասխանատվության զգացումը, այդ իսկ պատճառով այն բոլոր ժամանակներում համարվում է արդիական թեմա: Արժանապատվության զգացումը ստիպում է մարդկանց հարգել դիմացինին և նրա իրավունքները:

Հետազոտության նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակը սովորողներին ապահովելով անհրաժեշտ տեղակտվությամբ կապված իրենց իրավունքների ըմբեռման հետ: Այս նպատակի իրագործման համար առաջադրվել և լուծվել է հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել արժանապատվություն, պատիվ հասկացությունը
2. Ուսումնասիրել «Շախմատ» առարկայի նպատակը երեխաների շրջանում ստեղծագործ որպես մտածողություն զարգացնելը
3. Ուսումնասիրել և վերլուծել սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում:

ԳԼՈՒԽ 1 ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏԻՎ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ազատությունը գաղափար է, որը արտացոլում է անձանց վերաբերմունքը ինչ-որ գործողությունների նկատմամբ: Ըստ Շելլինգի ազատությունը բարու և չարի տարբերակել կարողանալու հիման վրա ընտրություն կատարելու կարողությունն է: Էթիկայում ազատությունը կապված է մարդու մոտ կամքի ազատության առկայության հետ:

Վերածննդի դարաշրջանում և հետագա դարերում ազտություն ասելիս հասկանում էին մարդու անհատականության անարգել, բազմակողմանի ուսումնասիրությունն ու բացահայտումը: Գերմանական կրոնի ու փիլիսոփայության մեջ, ազատության հարցը դիտարկվում է որպես մարդու բարոյաստեղծագործական բնույթի բացահայտում:

Սպինոզան սահմանում է ազատությունը որպես սեր Աստծո հանդեպ և Աստծո սեր՝ մարդու հանդեպ , դրանից մենք պարզ հասկանում ենք, թե որն է մեր փրկությունը կամ երանությունը կամ ազատությունը, այն Աստծո հանդեպ մշտական և հավերժական սիրո կամ մարդու նկատմամաբ Աստծո ունեցած սիրո մեջ է:

Մտքի ազատություն, խղճի ազատություն կամ գաղափարների ազատություն, այն հիմնարար սկզբունքներից մեկը, ժողովրդավարությանը բնորոշ հասկացություն, ուրիշների կարծիքներից անկախ անձնական տեսակետ, կարծիք կամ մտքեր ունենալու անձի քաղաքական ազատություն:

Արժանապատվությունը այն հիմքն է , որը ընկած է մարդու իրավունքների հիմքում , այն նաև փիլիսոփայական և բարոյագիտական հասկացություն է: Այն ընկալվում է որպես մարդու հատուկ բարոյական վերաբերմունքը ինքն իր հանդեպ և նրա հանդեպ հասարակության վերաբերմունքը, որտեղ ընդունվում է անձնավարության արժեքը: Արժանապատվությունը զուտ մարդկային հատկանիշ է և ձեռք է բերվում մարդու զարգացման որոշակի շրջանում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները

բարձրագույն արժեքներն են[1]: Յուրաքանչյուր մարդու այս իրավունքները համարվում են բնական և անօտարելի: Մարդը այդ իրավունքներով օժտված է ի ծնե, մարդկային տեսակին պատկանելու շնորհիվ: Իսկ որոշ իրավունքներից անգամ ցանկության դեպքում մարդը չի կարող հրաժարվել:

ԳԼՈՒԽ 2 ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ

«Շախմատ» ուսումնական առարկայի նպատակը երեխաներին տրամաբանական խաղի շնորհիվ հնարավորություն է ստանում զարգացնելու իր մտավոր կարողությունները, ինչը նպաստում է երեխայի համակողմանի զարգացմանը: «Շախմատ» առարկայի նպատակն է ձևավորել և զարգացնել մտավոր կարողությունը, ուշադրությունը, հիշողությունը, աշխատասիրությունը, կամքի ուժը, նպատակասլացությունը և համբերությունը: «Շախմատ» առարկայի ուսուցումը ունի կրթական մեծ ներուժ, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ նպաստում է սովորողների տրամաբանակն մտածողության զարգացմանը, կատարելագործվում են սովորողի երևակայությունը, վերլուծական կարողությունները՝ դրանով իսկ նպաստելով ուսումնական մյուս առարկաների արդյունավետ ուսումնասիրմանը, պարունակելով գիտության, արվեստի և սպորտի տարրեր, աշակերտի մեջ զարգացնում է ինքնուրույն աշխատանքի միջոցով հաջողությունների հասնելու կարողություններ:

«Շախմատ» առարկայի դասավանդման հիմնական սկզբունքներն են.

- Շախմատային կրթության անհրաժեշտությունը բոլոր սովորողների համար
- Յուրաքանչյուր աշակերտի համար հասանելիության ապահովումը,
- Առարկայի ուսուցմանը սովորողների ակտիվ մասնակցությունը,

[1] ՀՀ Սահմանադրություն գլուխ 1, հոդված 3, ընդունված 2015թ, գտնվում է առ այսօր ուժի մեջ https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

- Առարկայի ուսուցման գործնական ուղղվածությունը[2]։

Շախմատը երեխաներին օգնում է գիտակցել իրենց արարքների հետևանքները, ինչից էլ ծնվում է էթիկայի և բարոյականության գաղափարները։ Շախմատի գլխավոր առավելություններն են, որոնք կնպաստեն սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությանը առարկայի դասավանդման ընթացքում։ Դրանք են.

- Օգնում է երեխաներին կենտրոնանալ
- Զարգացնում է ստեղծագործական միտքը և սերմանում ինքնավստահություն
- Մարզում է ուղեղը և ձևավորում է համբերատարության զգացում
- Երեխաների մեջ սերմանում է հաղթելու և պարտվելու գաղափարը։

«Շախմատ» առարկայի դասավանդումը աշակերտների մեջ սերմանում է արժանապատվության զգացում, հնարավորություն ստեղծելով գնահատել իրավունքներն ու ազատությունները։ Շախմատը յուրաքանչյուր սովորողի արտացոլանքն է, սովորողները հնարավորություն են ունենաում խաղի ընթացքում ցուցաբերել համբերատարություն, լինել նախաձեռնող և ինքնավստահ սեփական ուժերի նկատմամբ։ Կարևոր նշանակություն ունի սովորողների իրավունքների պաշտպանությունը ։ Այդ իսկ նպատակով անհրաժեշտ է սովորողներին տեղեկացնել իրենց իրավունքների մասին։ ***Որպես իրազեկման եղանակ կարող է լինել տեղեկատվական թերթիկների ստեղծումը*** , ***դասընթացների կազմակերպումը, տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը և դերախաղերով իրազեկումը։***

Իսկ նման միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ է նախ իրազել երեխաների ծնողներին և նրանց հետ աշխատող մեծահասակներին, ինչը էլ ավելի կհեշտացնի սովորողների իրազեկմանը։ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան թե՛ երեխաներին և թե՛ մեծահասակներին հրաշալի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու երեխաների իրավունքները։ Կոնվենցիայի հիմքում ընկած են 4 առանցքային սկզբունքներ, որոնք նպատակաուղղված են ապահովելու կոնվենցիայով ճանաչված բոլոր իրավունքների լիակատար և արդյունավետ կիրառումը։ Կոնվենցիան էթիկական ու գաղափարական արժեքավոր հարթություն է։

[2] http://cis.chessacademy.am/static/article/31?lang=am

Սկզբունքների հիմքում ընկած հիմնական գաղափարն այն է, որ «Երեխաներն անհատներն» են։

Սովորողների իրավունքների, արժանապատվության ապահովման նպատակով անհրաժեշտ է.

1. Բացառել խտրականությունը երեխաների շրջանում։ Ստեղծել երեխաների համար հավասար հնարավորություններ, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնիցմ քաղաքական և այլ համոզմունքից, առողջական վիճակից կամ այլ կարգավիճակից։

2. Պահպանել երեխաների շահերը։ Բոլոր չափահաս մարդիկ պետք է անեն այնպես, որ երեխաների համար լինի լավագույնը, ցանկացած որոշում ընդունելիս առաջին հերթին հասկանալ, թե ինչպես այն կազդի երեխաների վրա։

3. Հարգել երեխաների կարծիքը, ինչը չափազանց կարևոր սկզբունք է հարգանք երեխայի կարծիքի նկատմամբ։

Շատ կարևոր է երեխաներին իրազեկել Հանրակրթության մասին ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավունքներն ու պարտականությունները։ Իրազեկում պետք է իրականացնել տարաբնույթ միջոցառումների կազմակերպման միջոցով, ինչը հետաքրքիր կլինի սովորողների համար և ընկալելի։

Գլուխ 5-ի Հոդված 20-ում նշվում է. Սովորողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ։ Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ։

2. Սովորողն իրավունք ունի ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն, ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ, անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից, մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների, պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը, ազատորեն

փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները, օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Պետք է նաև մանկավարժները իրազեկվեն, որ Հանրակրթության մասին ՀՀ օրենքի Հոդված 27-ում նշվում է մանկավարժների իրավունքներն ու պարտականությունները, որի 2 կետում նշվում է.

Մանկավարժական աշխատողը պարտավոր է՝

1) հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.

2) նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները. 1996 թվականին ընդունվեց «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որը դարձավ Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտանության համակարգի ձևավորման հիմքը: «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 1-ին հոդվածը հստակ ամրագրեց.

«Պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. cis.chessacademy.am
2. https://www.arlis.am/
3. https://hy.wikipedia.org/
4. https://library.anau.am/